ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հունվարի 9-ին կնքված ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հունվարի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 25.01.2017թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ 09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվել են 2017 թվականի հունվարի 9-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «25» հունվարի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Հ.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. 09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2017 թվականի հունվարի 9-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 900011054013	Հ/Հ 21700126499300[illegible]
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Սահակյան	**Հ.Եսայան**

Հավելված
Հաստատված է
«09» հունվարի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ	4232	7 400 000	12 060 000	22 200 000	29 600 000	37 000 000	44 400 000	51 800 000	59 200 000	66 600 000	74 000 000	88 800 000	**88 800 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ

ք.Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 217001264993001

«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Հ.Եսայան